զաղտնի կերպով պահում էին հեթանոս կռապաշտութեան հին սովորութիւնները»: Ու բերում է օրինակներ: Ազգով ասորի Դանիէլ եպիսկոպոսն եւս իր մի քարոզի մէջ ասում է, յանդիմանելով ժողովուրդին. «Դուք ձեր նախնեաց մոլար կռապաշտութեանը դարձաք նորէն» (Դ. 14):

Այսպէս եւ, Տիրան Թագաւորը եւ շատ իշխաններ բացորոշ կերպով հեթանոսական կեանք են վարում, եւ երբ Յուսիկ կաթողիկոսը յանդիմանում է նոցա, «բրածեծ» եւ «թոպամահ» է լինում: «Առանց Աստուծոյ շրջէին յաշխարհի կամակոր ազգ տանն Հայոց երկրին», ողբում է բարեպաշտ պատմիչը (Գ. 13) եւ շարունակում. «Սկսած այն ժամանակից, երբ նոքա քրիստոնէութիւն ընդունեցին, այդ ատեն լոկ իբրեւ մարդկային իմն կրօն, ո՛չ թէ ջերմեռանդ հաւատով, այլ իբրեւ մարդկային մոլորութիւն, հարկից դրդուած... խառնիճաղանճ մարդկանց բազմութիւնը, նախարարների թէ շինականութեան... Նոքա դեղերում էին եւ իրենց ժամանակը մաշում չքոտի բանեբով, հեթանոսական հին սովորութիւններում, բարբարոս եւ խուժադուժ հասկացողութիւնների մէջ»: Այդպիսի մի սովորութիւն էր օրինակ, պատմիչի ասելով որ ժամանակի հայերը «սիրով ու եռանդով մշակում էին իրենց վիպասանութեան առասպելական երգերը» («Եւ զիւրեանց երգս առասպելաց վիպասանութեանն սիրեցեալք ի փոյթ կրթութեանցն»): Եւ ինչ որ երգով պատմում էր այդ առասպելական երգերում, այդ ամէնին բոլորը հաւատում էին, յամառում նոցա մէջ»: («Հաւատացեալ եւ ի նոյն հանապազորդեալք»):

Վիպասանական երգերի հեղինակներին եւ կամ երգողներին եւս չի մոռացել Փաւստոս, հին հայոց գուսաններին:

Այսպէս, Յուսիկան որդիներ Պապի եւ Աթանագենէսի «անօրէն եւ ամբարիշտ», այսինքն հակաքրիստոնէական, հեթանոս ցոփ կենցաղի եւ բարքի մասին խօսելով, պատմիչը հաղորդում է թէ միանգամ երկու եղբայրները Աշիշատ են գնում, «ուր զառաջինն էր շինեալ դեկեղեցին ի հաւոյն նոցա Գրիգորէ», եւ այդտեղ «շարունակ արբեցողութեան յեռեւից են ընկնում, այսպանում Աստուծոյ տաճարը: Ապա, երկու եղբայրները մանում են եպիսկոպոսարանը եւ սկսում գինի խմել՝ բոզերի եւ վարձակների (վարձուած երգչուհիներ եւ պարուհիներ), գուսանների եւ կատակարանների հետ միասին եւ այդպիսով սուրբ ու նուիրական տեղերը քամահրում, ոտքի կոխան անում»:

Ահա նման մի տեսարան եւս, որին եւ հետեւում է Պապ Թագաւորի սպանութիւնը, յոյն զօրավար Տերէնտի վրանում: Դաւադիրները Պապի պատուին ճոխ ընթրիք են պատրաստած լինում: Գինին հոսում էր առատօրէն: Թմբկահարները, սրնդահարները, քնարահատները եւ փողահարները, բոլորն անխտիր եւ ամէն մէկը իր արուեստով ու պէսպէս ձայներով նուագում էին: Պապ Թագաւորը ուրախութեան գինին մատների մէջ բռնած՝ դիտում էր գուսանների պէս նուագախումբերը, ձախ ձեռքի արմուկով յեց, եւ մատների մէջ ոսկի բաժակ բռնած. աջ ձեռքը դրած էր իր թուրի դաստակի վրայ, որ կապել էր իր աջ ազդրից: Եւ մինչ (արքան) ակնապիշ իր աջակողմն էր նայում, դէպի գուսանների պէս-պէս նուագախումբերը, ահա այդ միջոցին՝ ակնարկի վրայ՝ հրաման է տալում յունաց զօրքերին...»: Կատարւում է դաւադիր ոճիրը:

Այսպիսով, Փաւստոս առաջին հայ պատմիչն է, որ մեզ շատ որոշակի պատմում է հին հայոց ժողովրդական ստեղծագործութեան՝ վիպական-պատմական առասպելների եւ երգերի, այլ եւ այդ ամէնը մշակող մեր հին գուսանների մասին: Թէեւ իբրեւ քրիստոնեայ կրօնաւոր՝ բացասական է նորա վերաբերմունքը այդ ամէնի հանդէպ, բայց եւ այնպէս, դիտակցաբար թէ անդիտակցաբար օգտւում է պատմական զրոյցներից:

Փաւստոսն է նաեւ, որ առաջինը լինելով հայ պատմիչների շարքում, յիշատակութիւն է անում — թէեւ դժբախտաբար շատ կարճ կերպով եւ անցողակի միայն — հին հայերի ամենասիրած ոճներից մէկի՝ Նաւասարդի մասին: Առիթը՝ Գնէլին դաւադրաբար սպաննել տալու համար Արշակ Թագաւորի պատրաստած կոչունքն է:

«Թագաւորը ո՛չ էր կապել պատանեակ Գրնէլի հանդէպ, ուստի շարունակ հալածում էր նորան եւ երկար ժամանակ նենգութիւն նիւ-